



ԵՐԿՈՒԵԱՔԹԻ, 11 ԱՊՐԻԼ, 2016

### ՏԵՐՈՒՆԱԿԱՆ ԱՊՈԹՔ

(միասնաբար արտասանուած)

Իմաստութիւն Հօր Յիսուս, Կուր ինձ իմաստութիւն Կբարիս խորհել եւ խօսել եւ գործել առաջի քո յամենայն ժամ. ի չար խորհրդոց, ի բանից եւ ի գործոց փրկեա Կիս. եւ ողորմեա քո արարածոց եւ ինձ բազմամեղիս: Ամէն:

### ՍԱՐՄՈՍ 123

ՈՂՈՐՄԷՆ ՄԵՋԻ, ՏԵՐ

Աչքերս քեզի բարձրացուցի, Տէր,  
որ երկինքի մէջ կը նստիս:  
Ինչպէս ծառայ մը հայեացքը իր տիրոջմէ չի կտրեր,  
կամ աղախին մը հայեացքը իր տիկնոջմէ չի կտրեր,  
այնպէս ալ մեր աչքերը քեզի յառած կը մնան,  
Տէր Աստուած մեր, մինչեւ ողորմիս մեզի:  
Ողորմէ մեզի, Տէր, ողորմէ մեզի.  
չատ եղաւ մեր կրած արհամարհանքը:  
Երկար ատեն կրեցիմք  
ծաղր ու ծանակը յղփացած մարդոց,  
արհամարհանքը ամբարտաւաններուն:

### ՇԱՐԱԿԱՆ - ԱՊՈԹՔ

Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ողորմեա:  
Ամենասուրբ Երրորդութիւն, սուր աշխաՀիս խաղաղութիւն:  
Եւ Հիւանդաց բժշկութիւն, ննջեցէլոց արքայութիւն:  
Արի Աստուած Հարցն մերոց, որ ապաւէն ես նեղէլոց:  
Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Յիսուս Փրկիչ մեզ ողորմեա:

### ԱՊՈԹՔ

Պահապան ամենայնի Քրիստոս,  
աջ քո հոսանքի լիցի ի վերայ իմ ի տուէ եւ ի գիշերի,  
ի նստիլ ի տան, ի գնալ ի մանապարհ,  
ի ննջել եւ ի յառնել, զի մի երբեք սասանեցայց.  
եւ ողորմեա՛ քո արարածոց եւ ինձ բազմամեղիս:

## ՕՐՈՒՄՆ ՆԻՒԹԸ



ԿՈՐՆԹԱՅԻՆԵՐՈՒՄ ՈՒՂՂՈՒՄԸ ԱՌԱՋԻՆ ՆԱՄԱԿԸ (ԳԼԽ 9:1-27)



### ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ԻՐԱՎԱՍՈՒԹԻՒՆՆԵՐ ԵՒ ՊԱՐՏԱԲՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ (9:1-27)

Այս գլուխը ուրիշ բան չէ եթե ոչ պարասխան մը բոլոր այն հարցերուն կապուած, որ նախապէս անդրադարձաւ Առաքեալը, ցոյց տալու թէ ինք որպէս Առաքեալ այնպիսի իրաւունքներ ունի, որոնք սակայն մէկդի է թողած: Առաջին իսկ օգտագործուած բառը կու գայ ցոյց տալու այդ մէկը: «Ազատ չե՛մ»: Նոյն վիճակը ունենի Կորնթացիները իրենք, «միթէ ազատ չե՛նք»: Բայց Պօղոս կը յիշեցնէր, որ չըլլայ թէ ձեր ազատութիւնը գայթակղութեան պարճառ դառնայ հաւաքքով տկար հաւաքացեալին: Կ'ըսէ. «Միթէ ազատ չե՛մ. միթէ առաքեալ չե՛մ. միթէ մեր Տէր Յիսուս Քրիստոսը ես իմ աչքերովս չտեսայ. միթէ իմ աշխատանքովս չէ՛ր որ դուք Տիրոջ պարկանեցաք: Նոյնիսկ եթէ ուրիշներուն համար առաքեալ չեմ, բայց ես այնպէս ձեզի համար՝ եմ. ես իմ առաքելութեանս կնիքը դուք էք, որ Տիրոջ կը պարկանիք» (1-2 հմր): Ահա իր իսկ կեանքի օրինակը յիշեցնելով, որ եթէ դուք ազատ էք, ես ալ ազատ եմ, մանաւանդ իբրեւ Առաքեալ, ես այնպիսի իրաւունքներ ունիմ, որոնք, սակայն, ի սէր Աւերարանի քարոզութեան, այդ բոլորը մէկդի եմ թողած, որպէսզի կարենամ հոգիներ շահիլ: Եթէ նոյնիսկ, ոչ նոր, բայց գոնէ եղածները չկորսնցնելու նպատակով: Միւս կողմէ, նաեւ կը յիշեցնէ իրենց հանգամանքը, որ անոնք Տիրոջ կը պարկանին, եւ ինք որպէս Առաքեալը այդ համայնքին, անոնք իր առաքելութեան ու քարոզութեան կնիքն են, այսինքն՝ վաւերական, հարազատ:

Տակաւին, «Միթէ մենք իրաւունք չունինք մեր աշխատանքին փոխարէն ուրելիք կամ խմելիք ստանալու: Միթէ իրաւունք չունինք մեր հաւաքակից կիներ մեզի հետ շրջեցնելու, ինչպէս միւս առաքեալները, Տիրոջ եղբայրները եւ Կեփաս կ'ընեն: Միայն ես ու Բառնաբա՛սը իրաւունք չունինք Աւերարանի քարոզութեամբ ապրուստ շահելու» (3-6 հմր):

Ահա Պօղոս Առաքեալ քանի մը օրինակներով կու գայ բացատրելու առաքելական իր իրաւասութիւնները ըսելով. «Ո՛ր զինուորը իր սեփական ծախսով զինուորութիւն կ'ընէ: Կա՛յ մէկը որ այգի տնկէ եւ անոր պտուղէն չվայելէ: Կա՛յ հովիւ մը որ ոչխարներուն կաթէն չճաշակէ» (7 հմր): Այս օրինակներով նաեւ ցոյց կու տայ իր աշխատանքին տեսակը, իբրեւ զինուոր, իբրեւ այգեգործ, եւ իբրեւ հովիւ: Առաւել եւս կը յիշեցնէ նոյնինքն Աստուծոյ կողմէ փրուած պատուէրը. «Կալին մէջ աշխատող եզին դունչը մի կապեր», եւ թէ «տաճարին մէջ ծառայողները տաճարէն կը կերակրուին» (13 հմր):

Եւ հարց կու տայ. «Եթէ մենք հոգեւոր սերմ ցանեցինք ձեր մէջ, շա՛տ է՝ եթէ նիւթական բարիք հնձենք ձեզմէ: Եւ եթէ ուրիշներ իրաւունք կը սեպեն այդ բարիքները վայելել ձեզմէ, մենք աւելի իրաւունք չունինք: Բայց մեր այս իրաւունքը երբեք չգործածենք. այլ՝ ամէն բանի կը համբերենք, որպէսզի ռեւէ բանով արգելք չըլլանք Քրիստոսի Աւերարանին տարածման» (11-12 հմր):

Հակառակ այն իրողութեան, որ Տէրը ինք պարտիրեց Աւերարանը քարոզողներուն համար Աւերարանի քարոզութեամբ ապրելու, սակայն Պօղոս Առաքեալ այդ իրաւունքը չօգտագործեց (15 հմր): Այլ ընդհակառակը, Աւերարանը քարոզելը պարտականութիւն կը համարէ, եւ վայ իրեն՝ եթէ չքարոզէ: Այդ պարտականութիւնը ինք ստացած է նոյնինքն Աստուծմէ: Իսկ այդ Աւերարանի քարոզութեան համար վարձատրութիւնը ձրիօրէն Աւերարանը քարոզելն է: Քրիստոսի խօսքերով. «Չրի առիք, եւ ձրի փռուք» (Մատթ 10:8): Այս բոլորը, որպէսզի Աւերարանի քարոզութեան սիրոյն շահի հոգիները:

Թէպէտ ազատ էր, բայց շարերը սիրաշահելու համար ինքզինք ծառայ դարձուց, Քրիստոսի օրինակովը, աստուածային փառքը մէկդի ձգեց եւ ծառայի կերպարանք առաւ: Նոյնպէս ալ Պօղոս Առաքեալ, ռեւէ մէկուն ենթակայ չէր, բայց ինքզինք նմանցուց եւ Հրեային հետ հրեայի պէս եղաւ, Մովսիսական Օրէնքին ենթակայ մարդոց հետ՝ անոնց պէս ապրեցաւ, հեթանոսին հետ՝ հեթանոսի պէս եղաւ, հաւաքքով տկարներուն հետ, տկարի պէս եղաւ: Առաքեալը առանց ռեւէ էական սկզբունք գոհելու յարմարեցաւ բոլորի դիրքին ու աստիճանին, որպէսզի «ամէն գնով կարենամ ոմանք փրկել: Եւ այս բոլորը կ'ընեմ՝ Աւերարանի սիրոյն, որպէսզի անոր տարածման մասնակցութիւնս բերած ըլլամ» (22-23 հմր):

Ահա կ'անցնի մէկ այլ ուրիշ օրինակով մը ցոյց տալու քրիստոնէական հաւաքքին մէջ ըստ այնմ ընթանալու անհրաժեշտութեան: Օրինակ, կը վերցնէ մարցադաշտին վրայ վազողը եւ կամ կռիւմարտիկը, որ ինքզինք խիստ կանոններու կ'ենթարկէ վաղանցուկ մրցանակը շահելու համար, որքան, հետեւաբար, անհրաժեշտ է հոգեւոր կեանքի համար նոյն ձեւի զսպումներ, որպէսզի ձեռք ձգենք յաւիտենական մրցանակը: